
ԱՐԴԻ ԲԱՐԲԱՌՆԵՐՈՒՄ ՀԻՆ ՀԱՅԵՐԵՆԻ ՇԵՇՏԱԿԻՐ Ե ԵՎ Ո
ՁԱՅՆԱՎՈՐՆԵՐԻ ԱՐՏԱՑՈԼՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՁ

ՍԱՐԳԻՍ ԱՎԵՏՅԱՆ

Ինչպես հայտնի է, հայոց այբուբենի ստեղծման ժամանակ ե և ո գրանշաններից յուրաքանչյուրը բառի մեջ գրաված բոլոր դիրքերում հնչյունական տեսանկյունից միարժեք է եղել, այն է՝ ե(=e) և ո(=o): Մակայն այժմ հայերեն զանազան բարբառներում հ. հայ. ո-ի դիմաց բառասկզբում հանդես են գալիս ո(վո), ո(ւո), ո(վե), ո(ւո), ո(վու) հնչյունակապակցություններ և ո(ո), ո(ու) ձայնավորներ, իսկ բառամիջում՝ ո(ո), ո(ու) երկբարբառներ և ո(ո), ո(ե), ո(ու) ձայնավորներ: Նմանապես հ. հայ. ե-ի դիմաց բառասկզբում առկա են ո(ե), ո(յե), ո(յի) հնչյունակապակցություններ և ո(ե), ո(ի) ձայնավորներ, իսկ բառամիջում՝ ո(ե) երկբարբառ և ո(ե), ո(ի) ձայնավորներ (հայ բարբառագիտության մեջ ո(ուո) երկբարբառն արտահայտվում է ո գրանշանի, իսկ ո(իե) երկբարբառը՝ ե գրանշանի միջոցով): Հայերենագիտության մեջ ընդունված տեսակետի համաձայն՝ հին հայերենի շեշտակիր ե և ո ձայնավորների երկբարբառացումը (e>ie և o>uo//ue) եղել է նրանց հետագա փոփոխության առաջին քայլը¹: Որոշ հետազոտողներ էլ ենթադրում են, որ շեշտակիր ե-ն և ո-ն արդեն հին հայերենում ունեցել են բարձրացող-երկբարբառային արտասանություն՝ ե(=իե), ո(=ուո)²: Ինչևէ, անկախ ժամանակագրությունից՝ ակնհայտ է, որ իե(ie)-ն և ու(uo)-ն առաջացել են սկզբնական շեշտակիր ե(=e) և ո(=o) ձայնավորների երկբարբառացմամբ, որը տիպաբանորեն համեմատելի է այլ լեզուներում հանդիպող նմանատիպ երևույթների հետ. հմմտ. լատիներենի շեշտակիր օ և օ ձայնավորներից առաջացած իսպաներեն ie, ue և իտալերեն ie, uo բարձրացող երկբարբառները³:

¹ Տե՛ս նաև Մ ու ը յ ա ղ յ ա ն. Հայոց լեզվի պատմական քերականություն, հ. 1, Հնչյունաբանություն, Երևան, 1982, էջ 94–99, 103–104:

² Տե՛ս Գ. Բ. Ջ ա հ ու կ յ ա ն. Հայ բարբառագիտության ներածություն, Երևան, 1972, էջ 63, 195, 197, Ա. Ղ ա թ ի բ յ ա ն. Հայ բարբառագիտություն, Երևան, 1953, էջ 110–111, 116:

³ Տե՛ս D. A. Pharies. A Brief History of the Spanish Language, Chicago and London, the University of Chicago Press, 2007, p. 82; J. I. Hualde, A. Olarra, A. M. Escobar, C. E. Travis. Introduccign a la lingüística hispánica(segunda edicign), Cambridge University Press, 2010, p. 299; C. Marazzini. La lingua italiana, profilo storico(terza edizione), il Mulino, Bologna, 2002, p. 159.

Հայերեն իե(ie) և ուօ(uo) երկբարբառների բարբառային արտացոլումների պարագայում առկա են երկու հիմնական խնդրահարույց կետ. 1) այնքան էլ պարզ չէ, թե կոնկրետ ինչ եղանակով են առաջացել բառասկզբային *y*, *w/v* բաղաձայնները, 2) արդյո՞ք բառասկզբային *e* և *o* պարզ ձայնավորների դեպքում շեշտակիր դիրքում անփոփոխ պահպանվել է նրանց հնագույն հնչումը, թե՞ *e*-ն և *o*-ն *ie* և *uo* երկբարբառների հետադարձ մենարբառացման արդյունք են, կամ էլ շեշտագուրկ դիրքում անփոփոխ պահպանված *e* և *o* ձայնավորները հետագա համարանական ընդհանրացմամբ տարածվել են նաև շեշտակիր դիրքի վրա:

Հենց այդ հարցերն էլ կփորձենք քննել ստորև:

Հնչյունաբանական-տիպարանական տեսանկյունից բառասկզբային *w/v*, *y* բաղաձայնների առաջացումը տվյալ դեպքում կարող է բացատրվել երկու կերպ.

ա) կամ *v/w*-ն և *y*-ն համապատասխանաբար *uo* և *ie* երկբարբառների ոչ վանկարար *u*-ից և *i*-ից առաջ զարգացած նախահավելական բաղաձայններ (prothetic consonants) են,

բ) կամ էլ բառասկզբում *uo* և *ie* երկբարբառների ոչ վանկարար *u*-ն և *i*-ն դարձել են *v/w* և *y*, այսինքն՝ երկբարբառները վերածվել են բաղաձայն + ձայնավոր կապակցության:

Ըստ Ա. Ղարիբյանի՝ բառասկզբում *n*(=*ուօ*) > *վօ* հնչյունափոխության պարագայում երկբարբառային ոչ վանկարար ու տարրը ուժեղանալով վերածվել է շրթնատամնային *վ* բաղաձայնի⁴: Հարցի նկատմամբ, ըստ էության, նմանատիպ մոտեցում է ցուցաբերել նաև Հ. Աճառյանը, ինչպես կարելի է հետևեցնել նրա կողմից նշվող *orb*(որբ) > *uorb* > *vorp*(վորփ) հնչյունական զարգացումից⁵: Սակայն հատկանշական է, որ բառասկզբում *uo*(ուօ) > *vo*(վօ) հնչյունափոխություն ենթադրող հետազոտողները սովորաբար չեն անդրադառնում հայերեն մի շարք բարբառներում բառասկզբային *vo*(վօ)-ի փոխարեն *vuo*(վո) հնչյունակապակցության առկայության փաստին. հմմտ. *ողջ*>*վոխջ*, *որբ*>*վորփ*, *ոսպն*>*վոսպ*, *ոտն*>*վոդ/վոտը* և այլն⁶: Բերված օրինակները կարծես վկայում են, որ նախկին երկբարբառային արտասանությունը այդ բարբառներում պահպանվել է, իսկ երկբարբառից առաջ բառասկզբում առաջացել է *վ* նախահավելական բաղաձայն: Թերևս այդ հանգամանքն է պատճառը, որ Հ. Մուրադյանը, վերանայելով նախկին

⁴ Տե՛ս Ա. Ղարիբյանի նշվ. աշխ., էջ 116:

⁵ Տե՛ս Հ. Աճառյանի Հայոց լեզվի պատմություն, հ. 2, Երևան, 1951, էջ 239:

⁶ Բերված օրինակների համար տե՛ս Ք. Մ. Մադաթյանի Ալաշկերտի խոսվածքը, Երևան, 1985, էջ 12, Հ. Աճառյանի Քննություն Վանի բարբառի, Երևան, 1952, էջ 38–41, Մ. Հ. Բադադյանի Թափաջյանի Մշտ բարբառը, Երևան, 1958, էջ 30, Մ. Ասատրյանի Լոռու խոսվածքը, Երևան, 1968, էջ 53–54:

նում ունեցած իր տեսակետը, որտեղ նա նույնպես ընդունում էր բառակազմային $uo > vo$, այն է՝ ձայնավորից առաջ $u > v$ հնչյունական անցում, գտնում է, որ $v/w(\psi/\lambda)$ բաղադրանք բառակազմում զարգացել է դեռևս $uo(nio)$ երկբարբառի առկայության պարագայում: Դա ակնհայտ երևում է նրա կողմից նշվող $n(o) > nio(uo) > ioio(wuo) > \psi io(vuo) > \psi o(vo)$ և $n(o) > (nio >) ուէ(ue) > ioւէ(wue) > \psi է(ve)$ հնչյունական զարգացումների գծապատկերից⁷: Մակայն բառակազմային $(e >) իէ(ie) > յէ(ye)$ հնչյունափոխության համար Հ. Մուրադյանը յիէ(yie) միջակա աստիճան չի առանձնացնում, այլ գտնում է, որ ie երկբարբառի արտաբերության ընթացքում առաջացած y կիսաձայնի որոշակի երանգը ավելի է ընդգծվել, որի շնորհիվ ie -ն փոխարկվել է ye երկհնչյունի: Համապատասխանաբար, նա տվյալ հնչյունական զարգացումը ներկայացնում է $ե(e) > իէ(ie) > յէ(ye)$ հնչյունափոխության շղթայի տեսքով⁸: Նկատենք, որ կիլիկյան հայերենի և արդի մի շարք բարբառների տվյալները, որտեղ շեշտի տակ բառակազմում առկա է $յէ(ye)$ երկհնչյուն, իսկ բառամիջում՝ $իէ(ie)$ երկբարբառ, (օրինակ՝ $ես(yes)$, բերդ($piert$), ընկեր(langier) և այլն)¹⁰, կարծես հաստատում են այն տեսակետը, որ բառակազմում, իրոք, տեղի է ունեցել $իէ(ie) > յէ(ye)$ ուղղակի անցում, իսկ բառամիջում ie երկբարբառը պահպանվել է անփոփոխ: Ինչ վերաբերում է մի շարք բարբառներում (Շամախիի, Կարնո և այլն) բառակազմային $յէ(ye)$ -ի դիմաց բառամիջում շեշտակիր $ե(e)$ -ի առկայությանը (հմմտ. մի կողմից՝ եզն>Շմխ. յեզն, Կրն. յեզ, մյուս կողմից՝ բերդ>Շմխ. բերթ, վեց>Կրն. վեց և այլն), Հ. Մուրադյանը այն դիտում է որպես շեշտակիր $իէ(ie)$ երկբարբառի հետադարձ մենաբարբառացման արդյունք՝ $իէ(ie) > է(e)$ ¹¹: Մակայն նա չի անդրադարձնում այն բարբառների տվյալներին, որոնք շեշտի տակ բառակազմում հանդես են բերում $յէ(yie)$, իսկ բառամիջում՝ $ե(ie)$, օրինակ՝ Վանի և Մշո բարբառներում (հմմտ. եզն>Վն., Մշ. յեզ, երբ>Վն., Մշ. յեփ, իսեղճ>Վն. իսեղճ, իսելք > Մշ. իսելք և այլն)¹²:

Կարծում ենք՝ տվյալ դեպքում պետք չէ անտեսել այն հանգամանքը, որ $ie(իէ)$ և $uo(nio)$ երկբարբառների պատմական փոփոխությունը ընդ-

⁷ Տե՛ս Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, հ. Ա, Երևան, 1972, էջ 71:

⁸ Տե՛ս Հ. Մուրադյանի նշվ. աշխ., էջ 99, հմմտ. նաև էջ 94 և հաջ.:

⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 103–104:

¹⁰ Տե՛ս Յ. Կարստ. Կիլիկյան հայերենի պատմական քերականություն, Երևան, 2002, էջ 54, Հ. Աճառյանի Հայոց լեզվի պատմություն, հ. 2, էջ 242, իսկ նույն օրինաչափության բարբառային դրսևորումների համար տե՛ս Հ. Աճառյանի Քննություն Առտիալի բարբառի, Երևան, 1953, էջ 24–26, Մ. Հ. Մուրադյանի Շամախի բարբառը, Երևան, 1962, էջ 34–35, Մ. Հ. Բաղդասարյանի Թափալցյան Արարատյան բարբառի խոսվածքները Հոկտեմբերյանի շրջանում, Երևան, 1973, էջ 28–29:

¹¹ Տե՛ս Հ. Մուրադյանի նշվ. աշխ., էջ 103:

¹² Բերված օրինակների համար տե՛ս Հ. Աճառյանի Քննություն Վանի բարբառի, էջ 30–33, Մ. Հ. Բաղդասարյանի Թափալցյան Մշո բարբառը, էջ 21–22:

հանուր առմամբ տեղի է ունեցել զուգահեռաբար: Ըստ այդմ՝ բառակազմային *ye(jt)* հանդես բերող բարբառներին (հմմտ. Շամախիի և Կարնո բարբառները) սովորաբար բնորոշ են նաև բառակազմային *vo(vlo)*, մյուս կողմից՝ բառակազմային *ye(jt)* ունեցող բարբառները (ասենք՝ Վանի, Ալաշկերտի, Մշո) հանդես են բերում նաև բառակազմային *vo(vln)*¹³ (թեև առանձին բարբառներում, ինչպես ստորև կտեսնենք, օրինակաբար հնչյունական դրությունը խախտված է համաբանական և այլ կարգի հնչյունափոխությունների հետևանքով): Ասվածից հետևում է, որ բառակազմային *ye(jt)*-ի և *vo(vlo)*-ի, մյուս կողմից՝ բառակազմային *ye(jt)*-ի և *vo(vln)*-ի առաջացումը չի կարող բացատրվել միմյանցից անկախ և տարբեր եղանակով: Արդ, եթե ընդունում ենք, որ բառակազմային *ye(jt)*-ն առաջացել է *ie > ye* հնչյունական անմիջական անցմամբ (ասենք՝ *ես > *իես > յես*, երբ *> *իեր > յեփ*), ապա կարծում ենք՝ նույնպիսի *uo > vo* հնչյունափոխություն պետք է ենթադրել նաև բառակազմային *vo(vlo)*-ի պարագայում (օր.՝ *որս > *ուօրս > վօրս* և այլն), իսկ բառակազմային *ye(jt)*-ի և *vo(vln)*-ի առաջացումն էլ իր հերթին դարձյալ պետք է բացատրվի զուգահեռաբար: Եվ ընդհակառակը, եթե բառակազմային *vo(vlo)*-ի առաջացման հարցում *vo/wvo* հնչյունափոխական միջակա աստիճան է ենթադրվում, այն է՝ *ուօ(uo) > ուօ(wuo) > վուօ(vuo) > վօ(vo)* (օր.՝ *որս > *ուօրս > *ուօրս > *վուօրս > վօրս*), ապա հետևողականության սկզբունքը պահանջում է նույն կերպ վարվել նաև բառակազմային *ye(jt)*-ի դեպքում՝ համապատասխանաբար ենթադրելով *իե(ie) > յիե(yie) > յե(ye)* հաջորդական հնչյունափոխություն (օր.՝ *ես > *իես > *իես > յես*):

Եթե նկատի ունենանք, որ շեշտի տակ բառակազմային *ye(jt)* և *vo(vln)* հնչյունակապակցությունների դիմաց բառամիջում սովորաբար հանդես են գալիս *ie(ե)* և *uo(ո)* երկբարբառներ (օրինակ, Վանի, Ալաշկերտի, Մշո բարբառներում), իսկ բառակազմային *ye(jt)* և *vo(vlo)* հնչյունակապակցություններին բառամիջում մեծ մասամբ համապատասխանում են *e(ե)* և *o(օ)* պարզ ձայնավորներ (ասենք՝ Կարնո, Շամախիի բարբառներում, Երևանի խոսվածքում և այլն), ապա առաջին հայացքից միանգամայն հավանական է թվում, որ *յ(յ)*-ն և *v/w(վ/ւ)*-ն *ie(իե)* և *uo(ուօ)* երկբարբառների ոչ վանկարար *i(ի)*-ից և *u(ու)*-ից առաջ զարգացած նախահավելական բաղաձայններ են, որոնց հաջորդող *ie(իե)* և *uo(ուօ)* երկբարբառների հետագա զարգացման ընթացքը եղել է ճիշտ նույն կերպ, ինչպես բառամիջի դիրքում: Սակայն այդ պարագա-

¹³ Ճամապատասխան օրինակների համար տե՛ս Ռ. Հ. Բադրյանի և Շամախիի բարբառը, Երևան, 1964, էջ 18–19, 24–25, Հ. Մ. Մկրտչյանի և Կարնո բարբառը, Երևան, 1952, էջ 14, 17, Հ. Աճառյանի Քննություն Վանի բարբառի, էջ 30–33, 38–41, Ք. Մ. Մադաթյանի նշվ. աշխ., էջ 10–12, Ս. Հ. Բադրյանի և Թափալցյանի Մշո բարբառը, էջ 21–22, 30:

յում տիպաբանական տեսանկյունից տարօրինակ է թվում այն, որ նույն բարբառներում բառասկզբի դիրքում $y(j)$ և $v/w(վ/ւ)$ բաղաձայններ չեն առաջացել նաև վանկարար $i(h)$ և $u(nl)$ ($< h. հայ. ի և ու$) ձայնավորներից առաջ: Համենայն դեպս, հայերեն բարբառներից ոչ մեկում բառասկզբում $h. հայ. ի և ու$ ձայնավորների դիմաց չունենք յի(yi) և վու/ւու(vu/wu) հնչյունակապակցություններ: Այնինչ, լեզուներում բառասկզբում սովորաբար y -ն առաջանում է առաջնալեզվային e/i , իսկ v/w -ն՝ շրթնային o/u պարզ ձայնավորներից առաջ¹⁴:

Բհարկե, սկզբունքորեն չենք բացառում, որ բառասկզբում $y(j)$ և $v/w(վ/ւ)$ բաղաձայնները կարող են ի հայտ գալ նաև երկբարբառի ոչ վանկարար i և u տարրերից առաջ, սակայն ճիշտ չէր լինի ոչ վանկարար i -ից և u -ից առաջ նախահավելական y և v/w բաղաձայններ ենթադրել՝ վանկարար i -ից և u -ից առաջ դրանց բացակայության պարագայում: Ուստի, կարծում ենք, որ $ie(hէ)$ և $uo(nու)$ երկբարբառների հետագա զարգացումը բառասկզբում և բառամիջում միասնական է եղել միայն այն բարբառներում, որտեղ թե՛ բառասկզբում և թե՛ բառամիջում ունենք $իէ(ie) > է(e)$ և $ուօ(uo) > օ(o)$ կամ $իէ(ie) > ի(i)$ և $ուօ(uo) > ու(u)$ մենաբարբառացում (օրինակ՝ Պոլսահայ, Կեսարիայի և Ազուլխսի բարբառներում. հմմտ. $էփ > *իէփ > Պլս. էփ, ասեղն > *ասիէղն > Պլս. ասէխ, էփ > *իէփ > Ազլ. իփ, խելք > *իիէլք > Ազլ. խիլք, ողբ > *ուօղբ > Պլս. օխպ, հող > *հուօղ > Պլս. խօղ, ոտն > *ուօտն > Ազլ. ուտնք, հող > *հուօղ > Ազլ. հուղ): Մինչդեռ բառասկզբային $y(j)$ և $v/w(վ/ւ)$ հանդես բերող բարբառներում $ie(hէ)$ և $uo(nու)$ (որոշ վայրերում (հատկապես Ղարաբաղի տարածքում)՝ $uo > ue$) երկբարբառների հետագա զարգացումը բառասկզբում և բառամիջում տեղի է ունեցել միմյանցից անկախ և տարբեր եղանակով. բառասկզբում $ie(hէ)$ և $uo(nու)$, $ue(nուէ)$ երկբարբառները համապատասխանաբար վերածվել են $ye(jէ)$ և $vo/wo(վօ/ւօ)$, $ve(վէ)$ բաղաձայն+ձայնավոր կապակցության, այսինքն՝ տեղի է ունեցել $i(h) > y(j)$ և $u(nl) > v/w(վ/ւ)$ հնչյունական անցում, մինչդեռ բառամիջում $ie(hէ)$ և $uo(nու)$, $ue(nուէ)$ երկբարբառները մի շարք բարբառներում (Վանի, Ալաշկերտի, Մշո և այլն) պահպանվել են անփոփոխ, իսկ այլ բարբառներում (Կարնո, Շամախիի, Թիֆլիսի բարբառներում, Երևանի խոսվածքում և այլն) հետագա մենաբարբառացում է տեղի ունեցել՝ $իէ(ie) > է(e)$ և $ուօ(uo) > օ(o)$ կամ $իէ(ie) > ի(i)$ և $ուօ(uo) > ու(u)$: Տվյալ դեպքում մենք հաշվի ենք առնում այն հանգամանքը, որ երկբարբառները լեզվի պատմական զարգացման ընթացքում կարող են ոչ միայն մենա-$

¹⁴ Տարբեր լեզուներից քաղված օրինակների համար տե՛ս Բ. Ա. Серебрян-ни и ко в. Вероятностные обоснования в компаративистике. М., 1974, с. 98–99; հմմտ. նաև Հ. Աճառյան. Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 6, Երևան, 1971, էջ 595, 599:

բարբառացման ենթարկվել, այլև տարբալուծվել երկու անկախ ձայնավորների, վերածվել բաղաձայն+ձայնավոր կապակցության և այլն¹⁵: Ըստ այդմ՝ կարելի է ենթադրել, որ բառասկզբում *ie(իէ) > ye(յէ) և uo(ուօ) > vo/wo(վօ/ւօ)* փոփոխությունից հետո տվյալ վիճակը պահպանվել է կիլիկյան հայերենում և այն բարբառներում, որոնք, ինչպես տեսանք, շեշտի տակ բառասկզբային *ye(յէ)* երկհնչյունի դիմաց բառամիջում հանդես են բերում *ie(իէ)* երկբարբառ: Իսկ ընդհանուր առմամբ ենթադրելի է հետագա փոփոխությունների հետևյալ ընթացքը. ա) բառամիջում *ie(իէ) և uo(ուօ)/ ue(ուէ)* երկբարբառները մի շարք բարբառներում (Շամախիի, Կարնո և այլն) մենաբարբառացման են ենթարկվել, որի շնորհիվ բառասկզբային *ye(յէ) և vo(վօ)/ve(վէ)* հնչյունակապակցությունների դիմաց բառամիջում համապատասխանաբար ունենք *e(է) և o(օ)/e(է)* պարզ ձայնավորներ (հմմտ. մի կողմից՝ եզն>*իէզն>Շմխ. յէզն, ե կ>*իէ կ>Շմխ. յէ կ, ոտն>*ուօտն>Շմխ. վօտ,ողջ>*ուօղջ>Շմխ. վօխձ, մյուս կողմից՝ բերդ>*բիէրդ>Շմխ. բերթ,խոտ>*խուօտ>Շմխ. խօտ): բ) Բառասկզբային *ie(իէ) > ye(յէ) և uo(ուօ) > vo(վօ)* փոփոխությունից հետո *յ(յ)-ին և վ(վ)-ին հաջորդող e(է)-ն և o(օ)-ն, ըստ էության, հայտնվել են բառամիջի շեշտակիր դիրքում, ուստի բառամիջի ie(իէ) և uo(ուօ) երկբարբառային արտասանությունը համաբանությամբ տարածվել է նաև նրանց վրա: Դրանով է բացատրվում որոշ բարբառներում (ասենք՝ Վանի, Ալաշկերտի, Մշո) բառամիջի ie(է) և uo(ո) երկբարբառների դիմաց բառասկզբային *yie(յէ) և vuo(վո)* հնչյունակապակցությունների առկայությունը (օր.՝ եղձ>*խիէղձ>Վն. խեղձ(=խիէղձ), եզն>*իէզն>յէզն>Վն. յեզ (=յիէզ), ձեռն>*ձիէռն>Ալշ. ձեռ(=ձիէռ), եզն>*իէզն>յէզն>Ալշ. յեզ(=յիէզ), թոռն>*թուօռն>Վն. թոռ(=թուօռ), ողջ>*ուօղջ>*վօղջ>Վն. վոխչ(=վուօխչ), հող>*հուօղ>Ալշ. հող(=հուօղ), ոսպն>*ուօսպն>*վօսպ>Ալշ. վոսպ(=վուօսպ) և այլն: գ) Մինչդեռ, ասենք, Թիֆլիսի բարբառում, որտեղ բառասկզբային *yi(յի) և vu(վու)* հնչյունակապակցությունների դիմաց բառամիջում համապատասխանաբար ունենք *i(ի) և u(ու)* պարզ ձայնավորներ¹⁶, դրությունը նախորդ կետից տարբերվում է նրանով, որ բառամիջի *ie(իէ) և uo(ուօ)* երկբարբառների համաբանական ընդհանրացումից հետո *ie(իէ) > i(ի) և uo(ուօ) > u(ու)* մենաբարբառացում է տեղի ունեցել թե՛ *յ(յ), վ(վ)-ին հաջորդող դիրքում և թե՛ բուն բառամիջի դիրքում* (օր.՝ մեղք>*միէղք> Թիֆլ. միիկ, ես>*իէս>յէս>յիէս>Թիֆլ. յիս, չորս>*չուօրս>Թիֆլ. չուրս,*

¹⁵ Տե՛ս նաև Աճառյան և Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 6, էջ 442:

¹⁶ Տե՛ս Ա. Томсон. Историческая грамматика современного армянского языка города Тифлиса. СПб., 1890, с. 33–37; հմմտ. նաև Ա. Կ. Մոսչոյան և Թիֆլիսի բարբառի կառուցվածքային առանձնահատկությունների արտացոլումը Գ. Սունդուկյանի երկերում, Բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, Երևան, 1956, էջ 5, 10:

ողջ>*ուողջ>*վողջ>*վուողջ>Թիֆլ. վուխյ): Ի դեպ, մեզ հետաքրքրող հարցի տեսանկյունից Թիֆլիսի բարբառի փոխհարաբերությունը, ասենք, Ազուլիսի բարբառի նկատմամբ, որտեղ շեշտի տակ թե՛ բառասկզբում և թե՛ բառամիջում *h*. հայ. Ե-ի դիմաց առկա է ի, իսկ *h*. հայ. *n*-ի դիմաց՝ ու¹⁷, ճիշտ նույնպիսին է, ինչպիսին, ասենք, Կարնո և Շամախիի բարբառների փոխհարաբերությունը (բառասկզբում՝ *ye(jt)* և *vo(vlo)*, բառամիջում՝ *e(t)* և *o(o)* օրինաչափությամբ), ասենք, Կեսարիայի և Պոլսահայ բարբառների նկատմամբ, որտեղ թե՛ բառասկզբում և թե՛ բառամիջում *h*. հայ. Ե-ի դիմաց առկա է *e(t)*, իսկ *h*. հայ. *n*-ի դիմաց՝ *o(o)* պարզ ձայնավոր¹⁸: Ըստ այդմ՝ Կեսարիայի, Պոլսահայ և Ազուլիսի բարբառներում բառասկզբում *i(h)* > *y(j)* և *u(ni)* > *v(v)* հնչյունական անցում տեղի չի ունեցել, այլ *ie(ht)* և *uo(nio)* երկբարբառները թե՛ բառասկզբում և թե՛ բառամիջում սկզբնապես պահպանվել են անփոփոխ, իսկ ավելի ուշ ենթարկվել *ie(ht)* > *e(t)*, *uo(nio)* > *o(o)* կամ *ie(ht)* > *i(h)*, *uo(nio)* > *u(ni)* մենաբարբառացման, մինչդեռ Կարնո, Շամախիի և Թիֆլիսի բարբառներում մենաբարբառացումը տեղի է ունեցել բառասկզբային *ie(ht)* > *ye(jt)* և *uo(nio)* > *vo(vlo)* հնչյունափոխությունից, իսկ այնուհետև Թիֆլիսի բարբառում *y(j)*-ին և *v(v)*-ին հաջորդող դիրքի վրա բառամիջի *ie(ht)* և *uo(nio)* երկբարբառների համաբանական ընդհանրացումից հետո: Հետևաբար Թիֆլիսի բարբառում *ie(ht)* > *i(h)* և *uo(nio)* > *u(ni)* մենաբարբառացման են ենթարկվել ինչպես բուն բառամիջի օրինաչափ առաջացած, այնպես էլ *y(j)*, *v(v)*-ին հաջորդող դիրքում համաբանական ընդհանրացմամբ ի հայտ եկած *ie(ht)* և *uo(nio)* երկբարբառները: Մինչդեռ Կարնո և Շամախիի բարբառներում, որտեղ բառամիջի երկբարբառները համաբանությամբ չեն տարածվել *y(j)*-ին և *v(v)*-ին հաջորդող դիրքի վրա, բնականաբար *ie(ht)* > *e(t)*, *uo(nio)* > *o(o)* մենաբարբառացումը տեղի է ունեցել միայն բուն բառամիջի դիրքում:

Ինչպես արդեն նշել ենք, ոչ պակաս խնդրահարույց է նաև *h*. հայ. Ե-ի և *n*-ի դիմաց մի շարք բարբառներում առկա բառասկզբային շեշտակիր *e(t)*-ի և *o(o)*-ի հարցը, որի վերաբերյալ հայերենագիտության մեջ արտահայտվել է երկու տարբեր տեսակետ: Ըստ Ա. Ղարիբյանի՝ երկբարբառային արտասանություն ունեցող *n(=nio)*-ն մի շարք բարբառներում բառասկզբում զրկվելով իր երկբարբառային տարրից, արտասանվում է պարզ *o* ձայնավոր¹⁹: Այլ կերպ ասած՝ Ա. Ղարիբյանը բառասկզ-

¹⁷ Օրինակների համար տե՛ս Հ. Աճառյան. Քննություն Ազուլիսի բարբառի, Երևան, 1935, էջ 43-46, 62-64:

¹⁸ Օրինակների համար տե՛ս Հ. Աճառյան. Քննություն Պոլսահայ բարբառի, Երևան, 1941, էջ 19, 24, Ս. Մ. Անթոնյան. Կեսարիայի բարբառը, Երևան, 1961, էջ 7, 12, 196, 229:

¹⁹ Տե՛ս Ա. Ղարիբյան. նշվ. աշխ., էջ 116:

բային $o(o)$ -ի, ըստ այդմ՝ նաև $e(t)$ -ի առկայությունը բացատրում է $uo(n-uo) > o(o)$ և $ie(hk) > e(t)$ մենաբարբառացմամբ: Մինչդեռ Հ. Մուրադյանը գրում է. «Հայերենի որոշ տարբերակներ, ինչպես բառասկզբում, այնպես և բառամիջում, ո-ին տալիս էին նույն արժեքը, որ նշանակում է, թե դրանց մեջ հին o հնչյունը փոփոխության չէր ենթարկվել»²⁰: Նմանապես նա գտնում է, որ «... միջին հայերենի որոշ տարբերակներում հին $ե$ -ն բառի մեջ գրաված բոլոր դիրքերում ուներ e պարզ ձայնավորի արժեք...»²¹: Ըստ այդմ՝ Հ. Մուրադյանը ենթադրում է, որ $e(=e) > hk(ie)$ և $n(=o) > nio(uo)$ երկբարբառացման գործընթացը ընդհանուր չի եղել հայերենի բոլոր տարբերակների համար, այլ որոշ վայրերում անփոփոխ պահպանվել է h . հայ. $ե$ -ի և $ո$ -ի պարզ ձայնավորային հնչումը: Մակայն հետազայում նա, կրկին անդրադառնալով h . հայ. $ո$ -ի (ինչպես և $ե$ -ի) պատմական զարգացման հարցին, գրում է. «Ու ձայնավորի երկբարբառացման այս գործընթացը կատարվել է ամբողջ հայերենում...»²²: Հետևաբար այս դեպքում այլևս խոսք չի կարող լինել հայերենի որոշ տարբերակներում h . հայ. $ե$ -ի և $ո$ -ի սկզբնական պարզ ձայնավորային հնչունական արժեքի պահպանման մասին, այլ Հ. Մուրադյանը նույնպես, ըստ էության, ընդունում է, որ h . հայ. $ե$ -ի և $ո$ -ի դիմաց բառասկզբային շեշտակիր $e(t)$ -ն և $o(o)$ -ն $ie(hk) > e(t)$, $uo(nio) > o(o)$ մենաբարբառացման հետևանք են:

Անշուշտ, եթե ընդունում ենք, որ $e(=e) > hk(ie)$ և $n(=o) > nio(uo)$ երկբարբառացման գործընթացը ընդհանուր է եղել հայերենի բոլոր տարբերակների համար, ապա մի շարք բարբառներում (Ագուլիսի, Մեղրու և այլն) հին հայերենի շեշտակիր $ե$ -ի դիմաց բառասկզբային ի, իսկ $ո$ -ի դիմաց բառասկզբային ու ձայնավորների առկայությունը²³, որն ակնհայտորեն ենթադրում է $ie(hk) > i(h)$ և $uo(nio) > u(ni)$ մենաբարբառացում և մինևնույն ժամանակ վկայում է, որ բառասկզբի դիրքում $ie(hk) > ye(jk)$ և $uo(nio) > vo/wo(վo/ւo)$ հնչունափոխությունը համահայկական երևույթ չի եղել, ինքնրստինքյան հանգեցնում է այն մտքին, որ այլ բարբառներում h . հայ. $ե$ -ի և $ո$ -ի դիմաց բառասկզբային շեշտակիր $e(t)$ -ն և $o(o)$ -ն նույնպես $ie(hk)$ և $uo(nio)$ երկբարբառների մենաբարբառացման արդյունք են: Օրինակ, Կեսարիայի և Պոլսահայ բարբառներում, որտեղ թե՛ բառասկզբում, թե՛ բառամիջում h . հայ. $ե$ -ի դիմաց կանոնավորապես հանդես է գալիս $e(t)$, իսկ h . հայ. $ո$ -ի դիմաց՝ $o(o)$ ²⁴,

²⁰ Տե՛ս Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, h . Ա, էջ 84:

²¹ Տե՛ս նույն տեղում, էջ 81:

²² Տե՛ս Հ. Մուրադյանի նշվ. աշխ., էջ 95:

²³ Օրինակների համար տե՛ս Հ. Աճառյանի Քննություն Ագուլիսի բարբառի, էջ 43-46, 62-64, Է. Աղայանի Մեղրու բարբառը, Երևան, 1954, էջ 31-33, 45-47:

²⁴ Տե՛ս Հ. Աճառյանի Քննություն Պոլսահայ բարբառի, էջ 19, 24, Ս. Մ. Անթոնյանի Կեսարիայի բարբառը, էջ 7, 12, 196, 229:

ըստ էության, շեշտակիր դիրքի $e(t)$ -ն և $o(o)$ -ն առաջացել են $ie(hէ) > e(t)$ և $uo(nւo) > o(o)$ հնչյունափոխությանը, իսկ անշեշտ դիրքում անփոփոխ պահպանվել է *h. հայ. Ե-ի և n-ի հնագույն պարզ ձայնավորային հնչույթ*: Այդ պարագայում Պոլսահայ բարբառում առկա վով «ով» և վոր «ո րր» բացառիկ ձևերը ավելի շուտ գրական փոխառության տպավորություն են թողնում: Մակայն կարծում ենք՝ արդի բարբառներում *h. հայ. Ե-ի և n-ի դիմաց առկա բառասկզբային շեշտակիր e(t)-ն և o(o)-ն ոչ բոլոր դեպքերում են առաջացել $ie(hէ) > e(t)$ և $uo(nւo) > o(o)$ հնչյունափոխությանը. պետք է տարբերակել մենաբարբառացման դրսևորումները շեշտագուրկ դիրքում անփոփոխ պահպանված $e(t)$ -ի և $o(o)$ -ի համաբանական ընդհանրացման երևույթից, որը, ցավոք, հայերենագիտության մեջ մինչ օրս հատուկ ուշադրության չի արժանացել: Հետազոտողները երբեմն այս կամ այն չափով անդրադարձել են համաբանական ընդհանրացման միայն այն դեպքերին, երբ շեշտակիր վանկի օրինաչափ հնչյունական արտացոլումները տարածվել են շեշտագուրկ դիրքի վրա²⁵: Մակայն բարբառային տվյալների համակողմանի քննությամբ պարզ է դառնում, որ ոչ սակավ դեպքերում տեղի է ունեցել նաև հակառակ երևույթը: Այսպես, Մասունի բարբառում, ըստ Վ. Պետրոսյանի, բառասկզբում *h. հայ. Ե-ի դիմաց սովորաբար հանդես է գալիս e(t), իսկ h. հայ. n-ի դիմաց՝ o(o)*: Մակայն երկու բառի դեպքում *h. հայ. Ե-ի դիմաց առկա է i(h)*՝ եզն > իզ, ել>իլ, իսկ ոսպն բառի դեպքում ունենք օսպ/ուսպ գուգաձևություն²⁶: Միևնույն ժամանակ խեղձ>խիղջ, դեղ>տիղ, մեղք>միխկ, մեծ>միձ, հող>հուղ, խոտ>խուղ, գործ>կուրձ և նման ձևերի²⁷ առկայությունը, կարծում ենք, վկայում է, որ տվյալ բարբառում շեշտակիր $ie(hէ)$ և $uo(nւo)$ երկբարբառների օրինաչափ զարգացումը եղել է ոչ թե $ie(hէ) > e(t)$ և $uo(nւo) > o(o)$, այլ $ie(hէ) > i(h)$ և $uo(nւo) > u(nւ)$ մենաբարբառացումը, որը բառասկզբում պահպանվել է միայն մեկ-երկու օրինակի դեպքում՝ եզն>*իեզն>իզ, ել>*իել>իլ, ոսպն>*ուսպն>ուսպ: Իսկ ընդհանուր առմամբ ընդհանրացել են շեշտագուրկ դիրքին բնորոշ $e(t)$ -ն և $o(o)$ -ն: Նմանապես շեշտագուրկ դիրքից $o(o)$ -ն համաբանությամբ տարածվել է շեշտակիր դիրքի վրա նաև Մշո բարբառում: Մ. Բաղդասարյան-Թափալցյանի վկայությամբ՝ Մշո բարբառում միավանկ և բազմավանկ բառերի սկզբում *h. հայ. n-ի դիմաց առկա է o(o), օրինակ՝ որդն>օրթ, որ>օր, ողբ>օխպ, ողբալ>օխպալ, ոչխար>օխչար, ոզնի>օզնի և այլն*: Միայն մի խումբ միավանկ բառերի սկզբում n-ն ունի վո(vuo) հնչույթ՝ ողջ>վոխջ, ոտն>վոդ, ոսպն>վոսպ,*

²⁵ Տե՛ս նաև Մ. Պետրոսյանի նշվ. աշխ., էջ 94-95, 103:

²⁶ Տե՛ս Վ. Ա. Պետրոսյանի Մասունի բարբառը, Երևան, 1954, էջ 17-18:

²⁷ Տե՛ս նույն տեղում:

որք>վորփ, որձ>վորց²⁸: Արդ, եթե նկատի ունենանք, որ զուգահեռ *ie(իէ)* երկբարբառի պարագայում միավանկ բառերի սկզբում կանոնավոր կերպով հանդես է գալիս *yie(յէ)*, մեկից ավելի վանկով բառերի սկզբում՝ *e(է)* և որ բառամիջում *h. հայ. ե-ի* և *n-ի* դիմաց շեշտակիր դիրքում համապատասխանաբար ունենք *ie(ե)* և *uo(n)* երկբարբառներ, իսկ շեշտագուրկ դիրքում՝ *e(է)* և *o(o)* պարզ ձայնավորներ²⁹, ապա կասկած չի կարող լինել, որ *uo(nuo)* երկբարբառի բառասկզբային օրինաչափ հնչյունական արտացոլումը վերը բերված մի խումբ բառերի դեպքում պահպանված վո(սո)-ն է, որը համաժամանակյա տեսանկյունից ընկալվում է որպես ընդհանուր կանոնից շեղում, մինչդեռ *o(o)*-ն *h. հայ. n(=o)* պարզ ձայնավորի շեշտագուրկ դիրքի օրինաչափ արտացոլումն է: Մալաթիայի բարբառում *h. հայ. ե-ի* և *n-ի* դիմաց շեշտակիր վանկում հանդես եկող *e(է)*-ն և *o(o)*-ն նույնպես թերևս համաբանական ընդհանրացման արդյունք են: Ըստ Թ. Դանիելյանի՝ Մալաթիայի բարբառում թե՛ միավանկ, թե՛ բազմավանկ բառերի դեպքում բառասկզբում և բառամիջում *h. հայ. ե-ի* դիմաց հիմնականում հանդես է գալիս *e(է)*, իսկ *h. հայ. n-ի* դիմաց՝ *o(o)*: Սակայն բառասկզբում և բառամիջում *h. հայ. ե-ի* դիմաց ի ձայնավոր է հանդիպում *ես>իս*, *խելք>խիլք*, *մեր>միր*, *թեփ>թիփ*, *սեւ>սիվ* բառերի, իսկ *h. հայ. n-ի* դիմաց ու ունենք միայն բառասկզբում որ>ուր և ոչ>ունչ բառերի դեպքում³⁰: Դժվար չէ նկատել, որ, ինչպես Մասունի բարբառում, այստեղ նույնպես ընդհանուր կանոնից շեղումները ենթադրում են *ie(իէ) > i(ի)* և *uo(nuo) > u(nu)* մենաբարբառացում և, ամենայն հավանականությամբ, դարձյալ արտացոլում են շեշտակիր դիրքի օրինաչափ հնչյունական վիճակը: Բհարկե, սկզբունքորեն հնարավոր է, որ բարբառներում առանձին դեպքերում նմանատիպ բացառություններ ու շեղումներ կարող էին առաջանալ միջբարբառային փոխազդեցությունների և փոխներթափանցումների հետևանքով: Բայց միննույն ժամանակ անհերքելի փաստ է նաև, որ հաճախ համաբանական ընդհանրացման միտում են ցուցաբերել ինչպես շեշտակիր, այնպես էլ շեշտագուրկ դիրքերի հնչյունական արտացոլումները, ընդ որում՝ տարբեր բարբառներում սովորաբար համաբանությամբ տարածվել է կա՛մ մեկը, կա՛մ մյուսը, բայց որոշ բարբառներում տեղի է ունեցել երկկողմանի համաբանական ընդհանրացում՝ ստեղծելով խառը վիճակ: Այդ առումով առավել հատկանշական են Ուրմիայի (Խոյի) բարբառի և Լոռու խոսվածքի ընձեռած տվյալները: Ըստ Մ. Սաստրյանի՝ Ուրմիայի

²⁸ Տե՛ս Մ. Հ. Բ ա դ դ ա ս ար յ ա ն - Թ ա փ ա լ ց յ ա ն. Մշո բարբառը, էջ 30, 267:

²⁹ Օրինակների համար տե՛ս նույն տեղում, էջ 21-22, 30-31:

³⁰ Տե՛ս Թ. Դ ա ն ի ե լ յ ա ն. Մալաթիայի բարբառը, Երևան, 1967, էջ 29-30, 34, 190-191, 204-205:

բարբառում միավանկ և երկվանկ բառերի սկզբում սովորաբար *h. հայ.* *n-ի* դիմաց առկա է վո(սո), միայն ոխ>վօխ և ոռնալ>վօռնալ ձևերում ունենք վո(սո): Բառամիջում շեշտակիր դիրքում սովորաբար հանդես է գալիս ո(սո) երկբարբառը, միայն մի շարք բառերում՝ օ(օ) պարզ ձայնավոր: Բայց բառամիջի անշեշտ դիրքում ևս *h. հայ. n-ն* արտացոլված է երկակի՝ որպես ո(սո) երկբարբառ և որպես օ(օ) պարզ ձայնավոր: Ինչ վերաբերում է *h. հայ. Ե-ի* արտացոլմանը, միավանկ բառերի սկզբում կանոնավորապես առկա է յե (*ye*), երկվանկ բառերի սկզբում (*այսինքն՝ անշեշտ դիրքում*) ունենք մասամբ յե(*ye*), մասամբ է(*e*), իսկ բառամիջում թե՛ շեշտակիր և թե՛ անշեշտ դիրքերում *h. հայ. Ե-ի* դիմաց կանոնավոր հանդես է գալիս է(*e*)³¹: Մեր կարծիքով, նկարագրված վիճակը բացատրելի է հետևյալ կերպ: Շեշտակիր և շեշտագուրկ դիրքերի օրինաչափ հնչյունական արտացոլումների համաբանական ընդհանրացումը *n-ի* և *Ե-ի* պարագայում անհավասարաչափ է եղել. եթե *n-ի* դեպքում բառամիջում մասամբ շեշտակիր վանկի ուօ(սո) երկբարբառային արտասանությունն է տարածվել շեշտագուրկ դիրքի վրա, մասամբ էլ, ընդհակառակը, շեշտագուրկ դիրքի օ(օ) պարզ ձայնավորը՝ շեշտակիր դիրքի վրա, ապա *Ե-ի* պարագայում բառամիջում շեշտագուրկ դիրքի է(*e*)-ն ամբողջովին դուրս է մղել իե(*ie*) երկբարբառին: Թերևս կարելի էր ենթադրել, որ բառամիջի շեշտակիր է(*e*)-ն իե(*ie*) > *e*(է) մենաբարբառացման արդյունք է (*ասենք՝ ձմեռն>*ձմիէռն>Ուրմ. ծրմէռ*): Սակայն բառամիջի շեշտակիր դիրքում ուօ(սո) երկբարբառի առկայությունը (*հմմտ. բոց>*բուօց>Ուրմ. պոց(=պուօց), խոտ>*խուօտ>Ուրմ. խոտ (=խուօտ) և այլն*) և առհասարակ բարբառներում իե(*ie*) և ուօ(սո) երկբարբառների պատմական փոփոխության ակնհայտ գուցահեռությունը գրեթե անհավանական է դարձնում այդպիսի ենթադրությունը: Բացի այդ, եթե բառասկզբում ուօ(սո)>վօ(սո) հնչյունափոխությունից հետո բառամիջի ուօ(սո) երկբարբառը համաբանությամբ տարածվել է վ(ս)-ին հաջորդող դիրքի վրա (*հմմտ. ոտն>*ուօտն>*վօտն>Ուրմ. վոտ(=վուօտ) և այլն*), ապա բառասկզբային իե(*ie*)>յե(*ye*) անցումից հետո իե(*ie*) երկբարբառի նույնպիսի համաբանական ընդհանրացում տեղի չի ունեցել: Դեռ ավելին. բառասկզբային օրինաչափ յե(*ye*) հնչյունակապակցությունը ոչ միայն պահպանվել է, այլև մասամբ տարածվել է բառասկզբի շեշտագուրկ դիրքի վրա: Ի դեպ, համաբանական փոփոխության այդպիսի անհամաչափությունը բնավ էլ տարօրինակ չէ, եթե հաշվի առնենք, որ լեզվում համաբանական փոփոխությունների ընդգրկման ծավալը, որպես կանոն, կանխա-

³¹ Տե՛ս Մ. Ե. Ասատրյան. Ուրմիայի (Խոյի) բարբառը, Երևան, 1962, էջ 25–26, 28–29:

տեսելի չէ³²: Իսկ Լոռու խոսվածքում դրությունը Ուրմիայի բարբառից տարբերվում է նրանով, որ ոչ միայն *h. հայ. ո-ն, այլև ե-ն* բառամիջում թե՛ շեշտակիր, թե՛ անշեշտ վանկերում երկակի արտացոլում ունեն՝ *ո > ո(սո)/ո(ո) և ե > ե(իե)/ ե(ե)*, այնպես որ, ըստ Մ. Ասատրյանի, հնարավոր չէ սահմանել մի ընդհանուր կանոն, թե որ դեպքում են *h. հայ. ե-ն և ո-ն* մնում որպես պարզ ձայնավորներ և որ դեպքում են երկբարբառային արտասանություն ստանում³³: Կարծում ենք՝ վերը կատարված քննության համատեքստում ինքնին հասկանալի է, որ տվյալ «խառը վիճակը» նույնպես երկկողմանի (այսինքն՝ մասամբ շեշտակիր, մասամբ էլ շեշտազուրկ դիրքերի օրինաչափ ձևերի) համաբանական ընդհանրացման հետևանք է:

Այսպիսով՝ հայերենագիտության մեջ արտահայտված տարբեր տեսակետների և համապատասխան լեզվական փաստերի համակողմանի քննությամբ մենք հանգում ենք այն եզրակացության, որ *h. հայ. ե և ո* ձայնավորների դիմաց արդի բարբառներում բառասկզբային *ye(jt)*, *ye(jt)*, *ye(jt)* և *vo(vt)*, *wo(wo)*, *ve(vt)*, *vo(vt)*, *vu(vt)* հնչյունակապակցությունների *y, w/v-ն* առաջացել են *i(h) > y(j)* և *u(n)* > *v/w(vt)* հնչյունափոխությամբ, այսինքն՝ բառասկզբում *ie(ht)* և *uo(nio)*, *ue(nit)* երկբարբառները համապատասխանաբար վերածվել են *ye(jt)* և *vo/wo(vt)*, *ve (vt)* բաղաձայն+ձայնավոր կապակցության: Այնուհետև բառամիջի շեշտակիր դիրքի *ie(ht)* և *uo(nio)* երկբարբառային արտասանությունը մի շարք բարբառներում համաբանությամբ տարածվել է *y(j)-ին և v(vt)-ին* հաջորդող դիրքի վրա, քանի որ բառասկզբային *ie(ht) > ye(jt)* և *uo(nio) > vo(vt)* փոփոխությունից հետո *y(j)-ին և v(vt)-ին* հաջորդող *e(t)-ն և o(o)-ն*, ըստ էության, արդեն հայտնվել էին բառամիջի շեշտակիր դիրքում: Հետագայում այդ բարբառների մի մասում *ie(ht)* և *uo(nio)* երկբարբառային արտասանությունը պահպանվել է ինչպես բուն բառամիջում, այնպես էլ *y(j)-ին և v(vt)-ին* հաջորդող դիրքում, իսկ բարբառների մեծ մասում *ie(ht)* և *uo(nio)* երկբարբառները *ie(ht) > e(t)* և *uo(nio) > o(o)* կամ *ie(ht) > i(h)* և *uo(nio) > u(n)* մենաբարբառացման են ենթարկվել: Ընդ որում՝ քանի որ բառասկզբային *ye(jt)* և *vo(vt)*, *wo(wo)*, *ve(vt)* հնչյունակապակցություններ հանդես բերող բարբառներում, ամենայն հավանականությամբ, բառամիջի *ie(ht)* և *uo(nio)* երկբարբառային արտասանությունը համաբանությամբ չի տարածվել *y(j)-ին և v(vt)-ին* հաջորդող դիրքի վրա, բնականաբար *ie(ht)* և *uo(nio)* երկբարբառների հետագա մենաբարբառացումը տեղի է ունեցել միայն բուն բառամիջի դիրքում: Մինչդեռ բառասկզբային *ye(jt)* և *vu(vt)*

³² Տե՛ս Մ. Ավետյան. ՎԻՈՒ-ի հնչյունական արժեքը և հնչույթային կարգավիճակը դասական հայերենում, Երևան, 2012, էջ 76–82:

³³ Տե՛ս Մ. Ասատրյան. Լոռու խոսվածքը, Երևան, 1968, էջ 48–54:

հնչյունակապակցությունների պարագայում $ie(hk) > i(h)$ և $uo(nio) > u(ni)$ մենաբարբառացում է ենթադրելի ինչպես բուն բառամիջում, այնպես էլ $y(j)$ -ին և $v(i)$ -ին հաջորդող դիրքում: Ինչ վերաբերում է *h. hայ. և n* ձայնավորների դիմաց բառասկզբի շեշտակիր դիրքում $e(t)$ և $o(o)$ ձայնավորների առկայությանը, դրանք միայն որոշ բարբառներում են առաջացել $ie(hk) > e(t)$ և $uo(nio) > o(o)$ մենաբարբառացմամբ (իսկ բառասկզբային $i(h)$ -ն և $u(ni)$ -ն՝ $ie(hk) > i(h)$ և $uo(nio) > u(ni)$ մենաբարբառացմամբ), մինչդեռ այլ դեպքերում բառասկզբի շեշտագուրկ դիրքում անփոփոխ պահպանված *h. hայ. և (=e)-ի* և *n(=o)-ի* պարզ ձայնավորային արտասանությունը համարանությանը տարածվել է բառասկզբի շեշտակիր դիրքի վրա:

К ВОПРОСУ О ТРАКТОВКЕ ДРЕВНЕАРМЯНСКИХ УДАРНЫХ ГЛАСНЫХ $e(=E)$ И $a(=O)$ В СОВРЕМЕННЫХ ДИАЛЕКТАХ

САРГИС АВЕТЯН

Резюме

Общепринято, что в древнеармянском буквы « и á, независимо от их позиции в слове, обозначали гласные *e* и *o* соответственно. В дальнейшем они подверглись дифтонгизации и потом претерпели другие изменения. Трактовка дифтонгов $ie(<») и uo//ue(<á)$ в современных диалектах включает в себя два проблематичных момента: во-первых, не совсем ясно, представляют ли $y(\hat{U})$ и $v/w(i/\delta)$ в начальных звукосочетаниях $ye(\hat{U}i)$, $yie(\hat{U}»)$, $yi(\hat{U}\zeta)$ и $vo(i\acute{u})$, $w\alpha(\delta\acute{u})$, $ve(i_i)$, $vu\alpha(i\acute{a})$, $vu(i\acute{a}\delta)$, восходящих к соответствующим древнеармянским ударным гласным « и á, протетические согласные, или их возникновение обусловлено превращением бывших дифтонгов $ie(<») и uo//ue(<á)$ в звукосочетания $ye(\hat{U}i)$ и $vo(i\acute{u})$, $w\alpha(\delta\acute{u})$, $ve(i_i)$ с дальнейшими аналогическими изменениями; во-вторых, древнеармянские начальные ударные гласные « и á как таковые встречаются в некоторых современных диалектах. Интересно выяснить, сохранились ли первоначальные гласные в данном случае неизменными в ударной позиции так же, как в безударной, или появились в результате монофтонгизации $ie(\zeta_i) > e(i)$ и $uo(\acute{a}\acute{u}) > o(\acute{u})$, или же, может быть, вокализм, свойственный начальному ударному слогу, распространился по аналогии и на безударную позицию. Всестороннее рассмотрение всех проявлений в современных диалектах первоначальных гласных одновременно в ударных и безударных слогах, вместе с типологическими данными, приводит к выводу, что $y(\hat{U})$ и $v/w(i/\delta)$ в начальных звукосочетаниях $ye(\hat{U}i)$, $yie(\hat{U}»)$, $yi(\hat{U}\zeta)$ и $vo(i\acute{u})$, $w\alpha(\delta\acute{u})$, $ve(i_i)$, $vu\alpha(i\acute{a})$, $vu(i\acute{a}\delta)$ возникли в результате превращения бывших дифтонгов $ie(<») и uo//ue(<á)$ в звукосочетания $ye(\hat{U}i)$ и $vo(i\acute{u})$, $w\alpha(\delta\acute{u})$, $ve(i_i)$. В случае $yie(\hat{U}»)$, $yi(\hat{U}\zeta)$ и $vu\alpha(i\acute{a})$, $vu(i\acute{a}\delta)$ дальнейшие

аналогические изменения и более поздняя монофтонгизация $ie(\zeta i) > i(\zeta)$ и $uo(\acute{a}\acute{o}\acute{u}) > u(\acute{a}\acute{o})$ затемнили фонетическую ситуацию. Что касается второго момента, наличие начальных ударных гласных $e(i)$ и $o(\acute{u})$ вместо древнеармянских $\varepsilon(=e)$ и $\acute{a}(=o)$ в некоторых диалектах является результатом монофтонгизации $ie(\zeta i) > e(i)$ и $uo(\acute{a}\acute{o}\acute{u}) > o(\acute{u})$, в других же диалектах гласные $\varepsilon(<e)$ и $\acute{a}(<a)$, сохранившиеся в начальной безударной позиции, распространились по аналогии и на ударную позицию.

ON THE QUESTION OF THE TREATMENT OF THE OLD ARMENIAN ACCENTED VOWELS $\varepsilon(=E)$ AND $\acute{a}(=O)$ IN MODERN DIALECTS

SARGIS AVETYAN

S u m m a r y

It is commonly accepted that in Old Armenian the letters ε and \acute{a} , regardless of their position in the word, originally stood for the vowels e and o , respectively. Later the accented $\varepsilon(=e)$ and $\acute{a}(=o)$ were diphthongized ($e > ie$ and $o > uo/ue$) and underwent further changes. The treatment of the diphthongs $ie(<\varepsilon)$ and $uo/ue(<\acute{a})$ in modern dialects involves two problematic points: firstly, it is far from clear whether the $y(j)$ and $v/w(q/l)$ in the initial sequences $ye(j\varepsilon)$, $yie(j\varepsilon)$, $yi(j\varepsilon)$ and $vo(qo)$, $wo(lo)$, $ve(q\varepsilon)$, $vuo(qn)$, $vu(qnl)$, ultimately going back to Old Armenian initial accented vowels $\varepsilon(=e)$ and $\acute{a}(=o)$, represent prothetic consonants, or they are due to transformation of earlier diphthongs $ie(<\varepsilon)$ and $uo/ue(<\acute{a})$ into sequences $ye(j\varepsilon)$ and $vo(qo)$, $wo(lo)$, $ve(q\varepsilon)$, with further analogical changes; secondly, the Old Armenian initial accented vowels $\varepsilon(=e)$ and $\acute{a}(=o)$ appear with the same phonetic value in some modern dialects. One wonders whether the original vowels $\varepsilon(=e)$ and $\acute{a}(=o)$ have been preserved unchanged in accented as well as in unstressed position in certain dialectal areas, or they are due to further monophthongisation $ie(h\varepsilon) > e(h)$ and $uo(nlo) > o(o)$, or perhaps, the vocalism, proper to the initial unaccented syllable, has been generalized by analogy to the initial accented position. The thorough examination of the reflexes of the original vowels $\varepsilon(=e)$ and $\acute{a}(=o)$ in both stressed and unstressed syllables in modern dialects, together with typological evidence, leads to the conclusion that the transformation of earlier diphthongs $ie(<\varepsilon)$ and $uo/ue(<\acute{a})$ into sequences $ye(j\varepsilon)$ and $vo(qo)$, $wo(lo)$, $ve(q\varepsilon)$, respectively, is responsible for the appearance of $y(j)$ and $v/w(q/l)$ in the initial sequences $ye(j\varepsilon)$, $yie(j\varepsilon)$, $yi(j\varepsilon)$ and $vo(qo)$, $wo(lo)$, $ve(q\varepsilon)$, $vuo(qn)$, $vu(qnl)$. In the case of $yie(j\varepsilon)$, $yi(j\varepsilon)$ and $vuo(qn)$, $vu(qnl)$, further analogical changes, and still later monophthongisation $ie(h\varepsilon) > i(h)$ and $uo(nlo) > u(nl)$ have obscured the phonetic situation. As far as the second point is concerned, the occurrence of the initial accented vowels $e(h)$ and $o(o)$, versus Old Armenian $\varepsilon(=e)$ and $\acute{a}(=o)$, is in some dialects due to monophthongisation $ie(h\varepsilon) > e(h)$ and $uo(nlo) > o(o)$, while in others the vowels $e(<\varepsilon)$ and $o(<\acute{a})$, surviving in the initial unaccented syllable, have been extended analogically to the accented position as well.